ԵՊՀ ԻՋԵՎԱՆԻ ՄԱՍՆԱՃՅՈՒՂԻ <ՏՆՏԵՍԱԳԻՏՈՒԹՅԱՆ> ՖԱԿՈՒԼՏԵՏԻ ԳԻՏԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԻ ԹԻՎ 4 ՆԻՍՏԻ ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅՈՒՆ

27.01.2018թ. Քաղաք Իջևան

Նախագահ Ն. Խուդավերդյան /դեկան/
Քարտուղար Ա. Սարիբեկյան /քարտուղար/
Խորհրդի նիստին մասնակցում էին խորհրդի անդամները, հրավիրված էին ԵՊՀ ԻՄ տնօրեն Ս. Առաքելյանը, ՈՒՄՎ պետ Ա. Դավթյանը և ֆակուլտետի դասախոսները:

Ֆակուլտետի խորհրդի նախագահ Ն. Խուդավերդյանը բացելով ֆակուլտետի խորհրդի նիստը հայտարարեց քվեակազմի առկայության մասին և ներկայացրեց օրակարգը:

ՕՐԱԿԱՐԳ

1. 2017-2018 ուս.տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփման մասին:

/Զեկ. Ն. Խուդավերդյան/

2. 2017-2018 ուս. տարվա երկրորդ կիսամյակի նախապատրաստական աշխատանքների մասին:

/Զեկ. Ն. Խուդավերդյան/

3. Ընթացիկ հարցեր

Ֆակուլտետի խորհրդի անդամների կողմից բաց քվեարկությամբ միաձայն ընդունվեց նիստի օրակարգը:

Լսեցին - ֆակուլտետի ըստ մասնագիտությունների 2017-2018 ուս.տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքների ամփոփման մասին

Ն. Խուդավերդյանը նշեց, որ դեկանատը ամենայն մանրամասնությամբ ուսումնասիրել և վեր է լուծել 2017-18 ուս. տարվա առաջին կիսամյակի քննարշրջանի արդյունքները, զուգահեռ ուսումնասիրվել է նաև ուսանողների դասերին հաճախումների վիճակը, ուսման վարձերի վճարման վիճակը, առարկայական ծրագրերի կատարողականը, որոնց արդյունքները մեր կողմից գնահատվել են բավարար:

Նա նշեց, որ ֆակուլտետում քննաշրջանը կազմակերպվել է ***123*** (անվճար՝ 36 վճարովի՝ 87) ***ուսանողների համար***, այդ թվում՝ «Ֆինանսներ», «Տնտեսագիտություն» և «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտությունների՝ 88 (անվճար՝ 20,

վճարովի՝ 68) ուսանողի և «Զբոսաշրջություն» և «Սերվիս» մասնագիտությունների՝ 35 (անվճար՝ 16, վճարովի՝ 19) ուսանողի համար: Քննություններն ու ստուգարքները դրական են հանձնել ***72 ուսանող*** (անվճար՝ 35, վճարովի՝ 37), որից գերազանց առաջադիմություն են ցուցաբերել 10 ուսանող (« Տնտ տես. » 5 «Սերվիս» 5) բարձր (գերազանց և լավ)՝ 27 (« Տնտ տես. » 16 «Սերվիս» 11), խառը 59 (« Տնտ տես. » 35 «Սերվիս» 24), միայն բավարար՝ 3 ուս (Տնտ): Հետևաբար պարտք ունեն 51 ուսանող: Ֆակուլտետի ընդհանուր առաջադիմությունը կազմել է 59%, այստեղ նշեմ նաև, որ անվճար ուսուցման համակարգում առաջադիմությունը կազմել է 97%, վճարովի՝ 43%: Ն. Խուդավերդյանը ներկայացրեց առաջադիմությունն ըստ մասնագիտությունների և կուրսերի

«Ֆինանսներ»

I կուրս

Քննաշրջանին մասնակցել են թվով 13 (5 անվճար և 8 վճարովի) ուսանողներ, որից դրական են հանձնել 8-ը (4 անվճար և 4 վճարովի): Մեկ ուսանող ցուցաբերել է գերազանց արդյունք:Առաջադիմությունը կազմել է ***62%*** (անվճար՝ 80% և վճարովի՝ 50%): Հիմնական պարտքերը գրանցվել են հետևյալ երկու առարկաներից.

1. Մաթ. անալիզ -1 առաջադիմությունը 69%
2. Տնտ. տեսություն -1 առաջադիմությունը 77%

«Տնտեսագիտություն»

II կուրս

Քննաշրջանին մասնակցել են թվով 22 (5 անվճար և 17 վճարովի) ուսանողներ, դրական են հանձնել 10-ը, որից 5-ը անվճար և 5-ը վճարովի: Առաջադիմությունը կազմել է ***45%*** (անվճար՝ 100% և վճարովիներինը՝ 29%), ինչը նախորդ ուս. տարվա համապատասխան ցուցանիշի (76%) համեմատ նվազել է 32%-ով: Հիմնական պարտքերը գրանցվել են §Գործույթների հետազոտման մաթ. մեթոդներ¦ դասընթացից, որի առաջադիմությունը կազմել 50%:

«Տնտեսագիտության տեսություն» III կուրս

Քննաշրջանին մասնակցել են 24 (5 անվճար և 19 վճարովի) ուսանողներ, որից դրական են հանձնել 8-ը, որից 5-ը անվճար և 3-ը վճարովի: Առաջադիմությունը կազմել է ***33%*** (անվճար՝ 100% և վճարովիներինը՝ 16%), ինչը նախորդ ուս. տարվա համապատասխան ցուցանիշի (46%) համեմատ նվազել է 13%-ով: Առաջադիմության ցածր արդյունքի հիմնական պատճառ է եղել «Տնտ. մտքի պատմ» և «Միջազգային տնտեսագիտություն» դասընթացներից գրանցած մեծ թվով «անբավարար» գնահատականները, որոնց առաջադիմությունը համապատասխանաբար կազմել է 38% և 66%:

«Տնտեսագիտության տեսություն» IV կուրս

Քննաշրջանին մասնակցել են 29 (5 անվճար և 24 վճարովի) ուսանողներ, որից դրական են հանձնել 17-ը, որից 5-ը անվճար և 12-ը վճարովի: Առաջադիմությունը կազմել է ***59%*** (անվճար՝ 100% և վճարովիներինը՝ 50%), ինչը նախորդ ուս. տարվա համապատասխան ցուցանիշի (62%) համեմատ նվազել է 3%-ով: :

Այսպիսով, տվյալ մասնագիտությունից քննաշրջանին մասնակցել են 88 ուսանողներ, որից դրական է հանձնել 43 ուսանող, պարտք ունեն 24 ուսանող: Մասնագիտության առաջադիմությունը կազմել է 49%:

§Զբոսաշրջություն ¦

Ι կուրս

Քննաշրջանին մասնակցել են թվով 5 /5 անվճար ուսանողներ : Բոլոր ուսանողները քննաշրջանը հանձնել են դրական: Առաջադիմությունը կազմել է ***100%*** (անվճար՝ 100%):

«Սերվիս» ΙΙ կուրս

Քննաշրջանին մասնակցել են 11 (3 անվճար և 8 վճարովի) ուսանողների, որից դրական են հանձնել 8-ը, որից 3-ը անվճար և 5-ը վճարովի: Առաջադիմությունը կազմել է ***73%*** (անվճար՝ 100% և վճարովիներինը՝ 63%), ինչը նախորդ ուս. տարվա համապատասխան ցուցանիշի (80%) համեմատ նվազել է 7%-ով: :

«Սերվիս» ΙΙΙ կուրս

Քննաշրջանին մասնակցել են 9 (4 անվճար և 5 վճարովի) ուսանողներ, որից դրական են հանձնել 7-ը, որից 4-ը անվճար և 3-ը վճարովի: Առաջադիմությունը կազմել է ***78%*** (անվճար՝ 100% և վճարովիներինը՝ 60%), ինչը նախորդ ուս. տարվա համապատասխան ցուցանիշի (80%) համեմատ նվազել է 2%-ով: : Մեկ ուսանող ցուցաբերել է գերազանց առաջադիմություն:

«Սերվիս» ΙΥ կուրս

Քննաշրջանին մասնակցել են 10 (4 անվճար և 6 վճարովի) ուսանողներ, որից դրական են հանձնել 9-ը, որից 4-ը անվճար և 5-ը վճարովի: Առաջադիմությունը կազմել է ***90%*** (անվճար՝ 100% և վճարովիներինը՝ 83%), ինչը նախորդ ուս. տարվա համապատասխան ցուցանիշի (80%) համեմատ աճել է 10%-ով:

Այսպիսով, տվյալ մասնագիտությունից քննաշրջանին մասնակցել են 35 ուսանողներ, որից դրական է հանձնել 29 ուսանողներ, պարտք ունեն 6 ուսանող: Մասնագիտության առաջադիմությունը կազմել է 83%:

Եվ այսպիսով, ֆակուլտետում գրանցվել է 59% առաջադիմություն:

Այսպիսով, հետևությունը հետևյալն է, որ ֆակուլտետում բարձր առաջադիմություն են ցուցաբերել «Զբոսաշրջություն» և «Սերվիս» մասնագիտությունների ուսանողները: Ցածր առաջադիմություն են ցուցաբերել «Ֆինանսներ» և «Տնտեսագիտության տեսություն» մասնագիտությունների ուսանողները, այստեղ վերլուծելով պատճառահետևանքային կապը, կարելի է ասել, որ առաջադիմության անկման վրա զգալի ազդեցություն է ունեցել ուսանողների հաճախումները և սեմինարներին պասիվ մասնակցությունը:

Արտահայտվեցին - «Ֆինանսներ» մասնագիտության կրթական ծրագրի ղեկավար Գ. Ավետիսյանը և «Զբոսաշրջություն» կրթական ծրագրի ղեկավար Պ. Ասիլբեկյանը:

Նրանք նշեցին, որ որպես կրթական ծրագրերի ղեկավարներ մասնակցել են քննաշրջանին: Այն անցկացվել է օբյեկտիվ և պատշաճ մակարդակով: Քննական գործընթացները չեն բողոքարկվել որևէ ուսանողի կողմից: Նրանք առաջարկեցին ֆակուլտետի ըստ մասնագիտությունների 2017-18 ուս. տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքները համարել բավարար:

Որոշեցին -ֆակուլտետի ըստ մասնագիտությունների 2017 -18 ուս. տարվա առաջին կիսամյակի քննաշրջանի արդյունքները համարել բավարար:

2.Լսեցին - 2017 - 18 ուսումնական տարվա երկրորդ կիսամյակի նախապատրաստական աշխատանքների մասին :

Ն. Խուդավերդյանը նշեց, որ դեկանատի կողմից կազմված է 2017-18 ուս. տարվա երկրորդ կիսամյակի դասացուցակը, որը ամբողջովին համապատասխանում է աշխատանքային ուսումնական պլաններին, ամբիոնային և անհատական ծանրաբեռնվածություններին: Երկրորդ կիսամյակի ուսումնական գործընթացն իրականացնելու համար անհրաժեշտ դասախոսական կազմն ամբողջությամբ համալրված է:

Երկրորդ կիսամյակի արդյունավետ կազմակերպման հարցում չկա որևէ խոչընդոտ, ինչ վերաբերում է կիսամյակի առարկաների արդյունավետ (պահանջված կերպ) դասավանդման հարցին կա որոշակի բացեր: Ոչ բոլոր առարկաների պորտֆոլիոններն են ներկայացված, ուստի դեկանատը պահանջեց ամբիոններից մեկ շաբաթյա ընթացքում լրացնել այդ բացը:

Արտահայտվեցին -Ա, Պոտոսյանը, Ռ. Օհանջանյանը

Որոշեցին - հաստատել ֆակուլտետի ըստ մասնագիտությունների 2017-18 ուս. տարվա դասատախտակները:

2017-2018 ուս. տարվա երկրորդ կիսամյակի նախապատրաստական աշխատանքների ընթացքը գնահատել բավարար:

Ամփոփիչ ելույթով հանդես եկավ մասնաճյուղի տնօրեն Ս. Առաքելյանը՝ անդրադառնալով ուսումնական գործընթացի շարունակական բարելավմանն ուղղված խնդիրներին. ընդգծելով, որ դասախոսները հետևողական լինեն

ուսանողների ինքնուրույն աշխատանքների իրականացման և գնահատման հարցերում: Պարոն Առաքելյանը հատուկ ուշադրություն դարձրեց դասախոսների վերապատրաստման ծրագրերին, էլեկտրոնային դասախոսությունների առկայությունը, ծրագրերի ու հարցաշարերի վերանայմանը, գնահատման համակարգին կարգապահական նորմերին վերաբերող խնդիրներին:

3.Լսեցին - ընթացիկ հարցեր

3.1. 2017-18 ուս. տարվա երկրորդ կիսամյակի անվանական կրթաթոշակի հավակնորդ ֆակուլտետի ուանողուհու թեկնածության քննարկման մասին:

/Զեկ. Ն. Խուդավերդյան/

Նա նշեց, որ ֆակուլտետի կողմից իրականացված համապատասխան ուսումնասիրությունները հանգեցրին նրան, որ ֆակուլտետից «Սահակ Զորափորեցի» անվանական կրթաթոշակի կարող է ներկայացվել ֆակուլտետի ՈՒԽ-ի նախագահ «Սերվիս» մասնագիտության երրորդ կուրսի ուսանողուհի Նարինե Մխիթարյանը:

Արտահայտվեցին -Պ. Ասիլբեկյանը, Հ. Ազիզյանը, ՈՒԳՀ նախագահ Ս. Հակոբյանը

Արտահայտվողները նշեցին, որ «Սահակ Զորափորեցի» անվանական կրթաթոշակի ներկայացվող ուսանողուհի Նարինե Մխիթարյանը վերջին երեք կիսամյակներում ցուցաբերել է գերազանց առաջադիմություն, միաժամանակ նա ակտիվորեն մասնակցում է ֆակուլտետում կազմակերպվող բոլոր ուսանողական և գիտական գործընթացներին և աչքի է ընկնում օրինակելի վարքագծով:

Որոշեցին - Հաստատել 2017-2018 ուս. տարվա երկրորդ կիսամյակի «Սահակ Զորափորեցի» անվանական կրթաթոշակի հավակնորդ ֆակուլտետի ուսանողուհի Նարինե Մխիթարյանի թեկնածությունը և ներկայացնել տնօրինությանը:

Գիտական խորհրդի նախագահ *Ն. Խուդավերդյան*

Քարտուղար *Ա. Սարիբեկյան*